Ահա ցոլացիկ մը իր այս զգացումներուն՝ ուղղուած առ Հ. Եղ. Հիւրմիւզեան.

«Հայր Եղուարդ – կ'ըսէ նա – Որպէս թէ հուպ առ իս ի սենեկիս կայիր, կամիմ թղթովս խօսել ընդ քեզ ամենեին անարուեստ և ընտանի՝ այսպէս։ Աչացդ լոյս և աւետիս մեծ, զի Հ. Աղեքսանդրն հուսկ յետոյ յանդիման եղեալ Լորտ Մասդրին հանդերձ Պարոնիւ և փաստաբանիւք, ցուցանէ նմա զթարգմանութիւնս Ռոլէնին զհինն և զնորն, և զծախս տպագրութեան նոցա միահամուռ ասէ լինել երից հազարաց լիրէ ըստեղինից։ Իսկ Մաստրն վճռէ նախ զի հատուցին ծախքն մեզ նոյնչափ ըստեղինք։ Ի գումարէ անտի հանեալ Պարոնին զտուեալն իւր, զաւելին ունի անցուցանել ի վանս ընդ զանազան տիտղոսիւք՝ վաստակաւորացն ի տրիտուր և այլոց ումանց ի ձիր։ Վճռէ երկրորդ զի ի Վենետիկ կանգնեսցի Ռաֆայէլեան կամ Եղուարդեան դպրոցն. իսկ դրամագլուխն ի Լոնտրա կացցէ ի Պէնքն. և շահն ամ ըստ ամէ անցուսցի այսր ի Վենետիկ առ ի պէտս ծախուց և պահպանութեան այնր դպրոցին։ Այս լուր հասարակաց է յուրախութիւն. իսկ ինձ յառանձին ուրախութիւն այն է, զի այսպիսի գործ մեծ ընդ լաւ ձեռն ել ի գլուխ, որ չէ սովոր յարդիւնսն պարծել ծափահար, և ընտրութիւնն իմ գնմանէ չեղեւ ընդունայն առաջի Հասարակութեանս». (գր. 1833 Դեկտեմբեր 15)։

*
* *

Քաղաքին ընտրութիւնը իր վճռական որոշողութիւնը կ'առնէ ուրեմն. բայց դպրոցի բացման մասին՝ դեռ չեն կասիր Աղեքս. Ռափայէլի անհանդարտ մտածութիւնները։

Նախախնամութիւնը այդ մասն ալ պահած էր 1836 թուականին։

Միաբանութիւնը յետ ի Վենետիկ զանազան տեղեր այցելելու՝ բանակցութեան կու գայ Կրատէնիկոներու հետ՝ վարձելու համար հրաշալի շէնք մը, Փեզարոյի պալատը։

Այլեւս ամէն ինչ կը պատրաստուի հետզհետէ. կը կատարուին օրինական ձեւակերպութիւններ Քաղաքական Իշխանութեանց հետ։ Արդէն Օրագրուրիւն մը կանուխէն իսկ կը հաղորդէր, թէ «Քաղաքապետն Ըսթափուր Վենետկոյ գիտացեալ զկառուցմանէ ռափայէլեան դպրոցին ի քաղաքիս՝ խնդամտի, և Ինայ լսել զսկզբնաւորութիւն նորին». (գր. 1836, Յուլիս 30). կ'ընտրուի նաեւ Միաբանութենէս առաջին Տեսչական Մարմինը, և աշակերտները կը հանին Դքսական Քաղաքը։

Եւ ահա Յուլիս 10–ին հետեւեալ պաշտօնական տեղեկագիրը կը ղրկուի առ Կոմս Սբաուր.

Վսեմափայլ Տէր

Ստորագրեալս, Ս. Ղազարու Հայ Միաբանեներու Ընդհանրական Աբբայ, պատիւ ունիմ ծանուցանելոյ Ձերդ Վսեմութեան, որ քիչ առեւնն Վենետկոյ մէջ պիտի բանանք Հայ պատանիներու կրթութեան համար, մեր Վանքին ուրիշ Մասնաճիւղ – Վարժարան մը։ Այս Վարժարանը առժամապէս պիտի բացուի Սուրբ Կասիանոսի Ժողովրդապետութեան տակ գտնուող Փեզարոյ Պալատին մէջ, մինչեւոյն մերոտներով և մինչեւոյն կարգապահութեամբ՝ ինչ որ է 1834–ին Փատուա հաստատուած մեր Վարժարանը։ Միայն անկէ զանազանուելու համար՝ սա պիտի կոչուի Ռափայէլեան Հայ Վարժարան։ Միաբանութեանս և իր Մասնաճիւղ տան վրայ Ձերդ Վսեմութեան հոգոր պաշտպանութիւնը խնդրած առնենս, պատիւ ունիմ ամենամեծ յարգանքով ինքզինքս յայտարարելոյ։

Ձերդ Վսեմութեան

Ս. Ղազար, 10 Յուլիս 1836

Խոնարհ, անձնանուէր և պատուապիր Ծառայ

ՍՈՒԹԻԱՍ ՍՈՄԱԼԵԱՆ եւն.

Առ Նորին Վսեմ. Գ. Պ. Կոմս տի Սբաուր
Նախագահ Արքայական Քաղաքին Վենետկոյ